ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/148

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17672-18 գրությամբ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 20.09.2018թ. թիվ 01/61-20518 գրության հիման վրա, 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17672-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի և «Իշխանհատակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.10.2018թ. գրությամբ խնդրել են հետաձգել Կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով քննվող գործի վերաբերյալ 04.10.2018թ. կայանալիք առաջին նիստը՝ հնարավորություն տալով ներկայացնելու հիմնավոր դիրքորոշում:

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.10.2018թ. գրությամբ հայտնել են հետևյալը՝

«ՀՀ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 16.08.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն /Կոնսորցիում/ և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.09.2018թ. առաջին տեղ զբաղեցնող մասնակցին ծանուցել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Կոնսորցիումի մասնակից «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ընդունել ի գիտություն, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետներում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը /Կոնսորցիում/ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 652,640 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոշեց մերժել Կոնսորցիումի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կոնսորցիումի կողմից գործի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն 16.08.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 652,640 ՀՀ դրամի չափով:

Կոնսորցիումը հայտնել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի մոտ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա 652,640 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորությունը առաջացել է պետական տուրքի գծով: Ընդ որում, նշված պետական տուրքի հաշվարկները, կապված են Ընկերության 05.09.2014թ. 15461-02 ներդիրի հետ, անձնական հաշվի քարտում հաշվառվել է Ընկերության ներկայացրած 04.09.2018թ. դիմումի և ներդիրի պատճենի հիման վրա՝ ներդիրի տրամադրման ամսաթվերով:

Վերոհիշյալ փաստը ապացուցելու համար «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն 08.10.2018թ. դիմել է ՀՀ ՊԵԿ (կցվում է)՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, թե կոնկրետ որ օրն է ՀՀ ՊԵԿ-ի կողմից մուտքագրվել և «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի հարկային ԱՀՔ քաղվածքով տեսանելի դարձել պետական տուրքի մասով պարտավորությունը:

Ի պատասխան Ընկերության 08.10.2018թ. գրության՝ ՀՀ ՊԵԿ Երեբունի սպասարկման բաժինը 16.10.2018թ. թիվ 4734/1753 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն (կցվում է), որի համաձայն պետական տուրքի հաշվարկները կապված են Ընկերության 05.09.2014թ. 15461-02 ներդիրի հետ, և անձնական հաշվի քարտում

հաշվառվել է Ընկերության ներկայացրած 04.09.2018թ. դիմումի և ներդիրի պատճենի հիման վրա՝ ներդիրի տրամադրման ամսաթվերով:

Ի պատասխան ՀՀ ՊԵԿ Էրեբունի սպասարկման բաժնի 16.10.2018թ. թիվ 4734/1753 գրության՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն 18.10.2018թ. գրությամբ (կցվում է) խնդրել է հայտնել հետևյալը.

16.08.2018թ. դրությամբ «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ի մոտ առկա 652640 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը արդյոք առաջացել է Ձեր գրությամբ մատնանշված 05.09.2014թ. 15461-02 ներդիրի հետ կապված պետական տուրքի հաշվարկման արդյունքում:

Եթե 05.09.2014թ. 15461-02 ներդիրի հետ կապված պետական տուրքի հաշվարկման արդյունքում պարտավորությունը Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվարկվել է 04.09.2018թ. Ընկերության կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացրած դիմումի և ներդիրի պատճենի հիման վրա, ապա արդյոք նշված պարտավորությունը «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ի համար կարող էր տեսանելի լինել 16.08.2018թ.:

Ի պատասխան «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի 18.10.2018թ. գրության՝ ՀՀ ՊԵԿ-ը իր 19.10.2018թ. թիվ 1776 գրությամբ (կցվում է) հայտնել է հետևյալը. «Հայտնում ենք, որ պետական տուրքի հաշվարկները կապված 05.09.2014թ. 15461-02 ներդիրի հետ, անձնական հաշվի քարտում հաշվառվել է Ընկերության ներկայացրած 04.09.2018թ. դիմումի և ներդիրի պատճենի հիման վրա՝ ներդիրի տրամադրման ամսաթվերով՝ 05.09.2014թ., 05.09.2015թ., 05.09.2016թ., 05.09.2017թ., 05.09.2018թ.՝ համաձայն Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի: Ելնելով վերոգրյալից՝ 04.09.2018թ. հետո տրամադրված պարտավորությունների մեջ՝ այդ թվում նաև նախկին ամսաթվերով տրամադրված (օրինակ 16.08.2018թ. դրությամբ) արդեն իսկ ներառված է հաշվարկված պարտավորությունները, բացառությամբ վճարման ժամկետը չլրացած պարտավորության գումարի (տվյալ դեպքում 16.08.2018թ. պարտավորության մեջ ներառված չէ 05.09.2018թ.-ով առաջացած գումարը):

Կոնսորցիումը նշել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի և ՀՀ ՊԵԿ-ի միջև վկայակոչված գրագրությունը վկայում է հետևյալ փաստերի մասին.

16.08.2018թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ի մոտ առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը պետական տուրքի գծով է:

Վերոհիշյալ ժամկետանց պարտավորությունը Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվառվել է միայն Ընկերության ներկայացրած 04.09.2018թ. դիմումի և ներդիրի պատճենի հիման վրա՝ ներդիրի տրամադրման ամսաթվերով՝ 05.09.2014թ., 05.09.2015թ., 05.09.2016թ., 05.09.2017թ., 05.09.2018թ.:

Հայտը ներկայացնելու օրը՝ 16.08.2018թ., Ընկերության անձնական հաշվի քարտում նշված գումարը արտացոլված չի եղել, քանզի այն քարտում հաշվառվել է միայն Ընկերության 04.09.2018թ. ներկայացրած դիմումի հիման վրա:

Այնումանայնիվ, հաշվի առնելով Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ ՊԵԿ-ը 04.09.2018թ. պետական տուրքի գծով հաշվարկված պարտավորությունը ներառել է նաև նախկին ամսաթվերով տրամադրված (այդ թվում նաև 16.08.2018թ. դրությամբ) հաշվարկված պարտավորություններում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տրամադրել է եզրակացությունը 06.09.2018թ.:

Կոնսորցիումը հայտնել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ն, հայտը ներկայացնելու օրը ուսումնասիրելով անձնական հաշվի քարտի քաղվածքը, պարզել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը հիմնավոր ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Եվ իրապես, նշված պարտավորությունը առաջացել է Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրից հետո, այն է՝ 04.09.2018թ., պետական տուրքի մասով համապատասխան դիմում ներկայացնելու հետևանքով:

Կոնսորցիումը գտնում է, որ նման պայմաններում «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն;

Ներկայացված դիրքորոշմամբ Կոնսորցիումը հայտնել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում, այն է 05.09.2018թ., կատարել է 03.09.2018թ. ծանուցմամբ՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջը՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին պատկանող akshik@mail.ru էլեկտրոնային հասցեից «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով Կոնսորցիումի մասնակիցների որակավորման բոլոր փաստաթղթերը:

Կոնսորցիումը նշել է, որ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն կատարել է իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ սահմանված ժամկետում Ընթացակարգի քարտուղարի էլ. հասցեին է ուղարկել պահանջված փաստաթղթերը, սակայն անհասկանալի պատճառներով՝ գնահատող հանձնաժողովը, արձանագրել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը:

Ի լրումն 23.10.2018թ. ներկայացված դիրքորոշման Կոնսորցիումը 31.10.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից 25.10.2018թ.-ին ներկայացված հարցմանն ի պատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայի թարմացված տվյալների համաձայն և 04.09.2018թ. Ընկերության կողմից ներկայացված 05.09.2014թ. թիվ 15461-02 ներդիրի հիման վրա, պետական տուրքի ճշգրտված հաշվարկները հաշվառել են անձնական հաշվի քարտում՝ ներդիրի տրամադրման ամսաթվերով, և 16.08.2018թ. առաջացել է 652640 ՀՀ դրամ հարկային պարտավորություն....:

Կոնսորցիումը հայտնել է, որ վերոհիշյալից ուղղակիորեն հետևում է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի մոտ 16.08.2018թ. դրությամբ առաջացած 652640 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը առաջացել է հայտը ներկայացնելու հետո՝ ՀՀ ՊԵԿ 04.09.2018թ. Ընկերության կողմից ներկայացված դիմումի համաձայն:

Կոնսորցիումը նշել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առաջացած 652640 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը առաջացել է հայտը ներկայացնելուց հետո՝ գրեթե 1 ամիս անց ՀՀ ԿԱ ՊԵԿ 04.09.2018թ.

ներկայացրած դիմումի հիման վրա: Հետևաբար Ընկերությունը հայտը ներկայացնելու պահին չէր կարող տեղյակ լինել, որ հայտը ներկայացնելուց հետո գրեթե մեկ ամիս անց դիմում ներկայացնելու արդյունքում հետին թվականներով կառաջանա ժամկետանց պարտավորություններ:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Կոնսորցիումը խնդրել է «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստերը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.09.2018թ. թիվ 01/61-20518 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կոնսորցիում) գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Կոնսորցիումի հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող: Ինչպես նաև Կոնսորցիումը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Կոնսորցիումի անդամ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 652 640 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում Կոնսորցիումը չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 44-րդ կետը, հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետը և 7.15-րդ կետը, որոշեց մերժել Կոնսորցիումի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/148 ընթացակարգի շրջանակներում 04.10.2018թ. ժամը 10:15-ին և 10.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-

18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***16.08.2018թ.*** հայտ է ներկայացրել «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն կոնսորցիումով:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրույթան 1.7 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Կոնսորցիումի մասով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Միաժամանակ որոշվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 652 640 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ Կոնսորցիումը, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտավորություններ՝ 652 640 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Կոնսորցիումը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման

պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 44-րդ կետը, հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետը և 7.15-րդ կետը, մերժվում է Կոնսորցիումի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17672-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 20.09.2018թ. թիվ 01/61-20518 գրությունը և կից փաստաթղթերը, «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸի և «Իշխանհատակ» ՍՊԸ-ի 23.10.2018թ. և 31.10.2018թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***16.08.2018թ.*** հայտ է ներկայացրել «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն կոնսորցիումով:

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ և «Իշխանհատակ» ՍՊԸ կոնսորցիումը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 03.09.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ

պետական եկամուտների կոմիտե «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի և «Իշխանհատակ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 652 640 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով արձանագրվել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտավորություններ՝ 652 640 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Կոնսորցիումը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ուստի հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 44-րդ կետը, հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետը և 7.15-րդ կետը, մերժվում է Կոնսորցիումի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.08.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 652 640 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 2 բաժնի 29.10.2018թ. թիվ 1850 գրությունը, որտեղ նշվում է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայի թարմացած տվյալների համաձայն և 04.09.2018թ. Ընկերության կողմից ներկայացված 05.09.2014թ. թիվ 15461-02 ներդիրի հիման վրա, պետական տուրքի ճշգրտված հաշվարկները հաշվառվել են անձնական հաշվի քարտում՝ ներդիրի

տրամադրման ամսաթվերով և 16.08.2018թ. առաջացել է 652 640 ՀՀ դրամ հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպես՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված 06.09.2018թ. եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 652 640 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը: Սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 2 բաժնի 29.10.2018թ. թիվ 1850 գրության համաձայն՝ 16.08.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ/ 652 640 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը առաջացել է 04.09.2018թ. Ընկերության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 05.09.2014թ. թիվ 15461-02 ներդիրի հիմնան վրա:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված արձանագրում եմ, որ Ընկերության մոտ 652 640 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունը փաստացի առաջացել է Ընկերության

կողմից հայտը ներկայացնելու օրից՝ 16.08.2018թ.-ից հետո, այն է՝ 04.09.2018թ.-ին, Ընկերության կողմից համապատասխան դիմում ներկայացնելու հետևանքով:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով արձանագրված երկրորդ հիմքին, այն է՝ Կոնսորցիումը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը՝

«Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ն և «Իշխանհատակ» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ և «Իշխանհատակ» ՍՊԸ կոնսորցիումը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին 03.09.2018թ. սահմանված կարգով armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային հասցեին ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել «ԵՔ-

ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Կոնսորցիումի ներկայացուցիչը ՍՑ-ԱՄ-2018/148 ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «akshik@mail.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլեկտրոնային հասցեից 05.09.2018թ. ժամը 15:48-ին Ընթացակարգի հրավերում նշված «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին են ուղարկվել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «akshik@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև նշված էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնի համապատասխան էլեկտրոնային նամակն, արձանագրում եմ, որ Կոնսորցիումը «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (03.09.2018թ.) սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, 05.09.2018թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը մասնակցի կողմից գնահատող հանձնաժողովին ուղարկվում են գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումն ուղարկելու օրվանից <u>երեք աշխատանքային օրվա ընթացքում</u>:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները

որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Կոնսորցիումի կողմից առկա չէ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, քանի որ Կոնսորցիումը համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված եռօրյա ժամկետում փաստացի կատարել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ուղարկելու պարտականությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17672-18 գրությամբ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 00437555) և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08207526) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ